

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն N 1332

19 օգոստոսի 1999 թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 1997 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կանոնադրությունը և կենտրոնական ապարատի կառուցվածքը հաստատելու մասին» N 532 որոշմամբ *հրամայում եմ*

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման վարչության կազմում ստեղծել քաղաքացիական կացության ակտերի գրանցման հանրապետական արխիվ՝ բաժնի կարգավիճակով:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման վարչության քաղաքացիական կացության ակտերի գրանցման հանրապետական արխիվի կանոնադրությունը (կցվում է):

3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման վարչության քաղաքացիական կացության ակտերի գրանցման հանրապետական արխիվի հաստիքային միավորները սահմանել՝ ըստ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հաստիքացուցակի:

Դ. Հարությունյան

Հաստատված է

*ՀՀ արդարադատության նախարարի
1999 թվականի օգոստոսի 19-ի
N 1332 հրամանով*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ը Ն Թ Յ ՈՒ Ն

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման վարչության (այսուհետ՝ Վարչության) քաղաքացիական կացության ակտերի գրանցման հանրապետական արխիվը (այսուհետ՝ Արխիվ) Վարչության ներքին կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Արխիվն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և Վարչության կանոնադրություններով, սույն կանոնադրությամբ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամաններով:

3. Արխիվի կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատում և փոփոխում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

4. Արխիվն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ կնիք, ինչպես նաև ձևաթուղթ և դրոշմակնիք:

II. ԱՐԽԻՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Արխիվի հիմնական խնդիրն է՝ իր իրավասության շրջանակներում քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված արխիվային գործի լիարժեք և արդյունավետ իրականացումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ խնդիրներ:

6. Արխիվն իր առջև դրված խնդիրների լուծման նպատակով.

- «Հայաստանի ազգային արխիվային ֆոնդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան համալրում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման (այսուհետ՝ ՔԿԱԳ) տարածքային բաժինների գործունեությամբ առաջացած փաստաթղթերը, համակարգում և վերահսկում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման հետ կապված արխիվային գործը.

- սահմանված կարգով ապահովում է արխիվ հանձնված փաստաթղթերի հաշվառումը և սահմանված ժամկետում պահպանումը, կատարում է արխիվային փաստաթղթերի փորձագիտական արժեքավորումը, ստեղծում և կատարելագործում է արխիվի գիտատեղեկատու համակարգը, վարում է արխիվային ֆոնդի, գործերի և փաստաթղթերի հաշվառումը.

- սահմանված կարգով արխիվային փաստաթղթերը տրամադրում է ժամանակավոր օգտագործման.

- արխիվային փաստաթղթերի վերաբերյալ կատարում է վերլուծական աշխատանք, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի, նրա տեղակալի, Վարչության պետի հանձնարարությամբ՝ ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարներին և աշխատողներին տեղեկացնում է այդ փաստաթղթերի կազմի և բովանդակության մասին, դրանց վերաբերյալ պատրաստում վերլուծական և տեղեկատվական նյութեր.

- Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի, նրա տեղակալի, Վարչության պետի հանձնարարությամբ Հայաստանի Հանրապետության պետական և գերատեսչական արխիվներից ստանում է անհրաժեշտ արխիվային փաստաթղթերի պատճեններ և տեղեկանքներ.

- Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի, նրա տեղակալի հանձնարարությամբ մասնակցում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված արխիվային փաստաթղթերի հրապարակմանը.

- պահպանում է պետական, ծառայողական և անձնական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ պարունակող փաստաթղթերի պահպանության և օգտագործման հատուկ ռեժիմը.

- սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում արխիվային փաստաթղթերի գաղտնագերծման վերաբերյալ.

- մեթոդական և գործնական օգնություն է ցույց տալիս ՔԿԱԳ տարածքային բաժիններին՝ ընթացիկ գործավարության և արխիվ հանձնման ենթակա փաստաթղթերի հետ տարվող աշխատանքներում.

- իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

7. Արխիվում քաղաքացիական կացության ակտերը և դրանց հետ կապված այլ փաստաթղթերը պահպանվում են 75 տարի ժամկետով: Այս ժամկետը հաշվվում է փաստաթղթերը գործավարությամբ ավարտելու տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ից: Արխիվում պահպանվող փաստաթղթերի ժամանակավոր պահպանության ժամկետը լրանալուց հետո դրանք սահմանված կարգով տեղափոխվում և հանձնվում են մշտական պահպանության:

III. ԱՐԽԻՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Արխիվի վարիչն անմիջականորեն ենթարկվում է Վարչության պետին:

9. Արխիվի վարիչը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով:

10. Արխիվի վարիչը՝

- իրականացնում է Արխիվի գործունեության անմիջական ղեկավարումը.

- ապահովում է Արխիվի աշխատանքի պատշաճ կազմակերպումը, աշխատողների միջև բաշխում է պարտականությունները.

- իր իրավասության շրջանակներում Արխիվի աշխատողներին տալիս է ցուցումներ.

- ստորագրում և կնքում է Արխիվի անունից պատրաստվող փաստաթղթերը.

- իր իրավասության շրջանակներում ապահովում է Արխիվի և այլ մարմինների փոխհարաբերությունները.

- կատարում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի, նրա տեղակալի, Վարչության պետի հանձնարարականները.

- Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի, նրա տեղակալի, Վարչության պետի գիտությամբ, իր իրավասության շրջանակներում, այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է Արխիվի գործունեությանն առնչվող անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.

- պատասխանատվություն է կրում Արխիվի առջև դրված խնդիրների լուծման համար.

- իրականացնում է իրեն վերապահված այլ լիազորություններ:

Պրանցված է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից

20 օգոստոսի 1999 թ.

Պետական գրանցման թիվ 102990138